


ԿԻՉՈՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կոմայրի» օրաթերթի հավելված

1991 թ. հունվար: № 9: Գինը՝ 50 կոպ.

1988 ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 7



Լուսանկարը՝ ՀՄ. Կարապետյանի

ՔԱՆԴՈՂԻԴ ՏՈՒՆԸ ՔԱՆԴՎ.Ի, Գ Յ Ո Ւ Մ Բ Ի

ՇԻՐԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Չկա զանգակի ձայն, չկա դողանջում,
Լուսյուն է տիրել ամեն մի անկյուն...
Ջիվանի

Սգավոր քաղաք, փլատակ, Գյումրի,
Վիրավոր ընկած՝ լայիս ես, Գյումրի,
Դարձել ես տխուր, ավերակ Աճի,—
Քանդողիդ տունը քանդվի, Գյումրի:

Նահատակ եղան շատ հազար, Գյումրի,
Երեսիդ մեռոն չմնաց, Գյումրի,
Դարձել ես բնավեր՝ պատկերով Աճի,—
Քանդողիդ տունը քանդվի, Գյումրի:

Արագած մայրը սև հագավ, Գյումրի,
Ծիրակի դաշտը չորացավ, Գյումրի,
Ախորձան գետը՝ դուրդուկի մորմուռ,—
Քանդողիդ տունը քանդվի, Գյումրի:

Ցոթ-վերքի զանգը լուել է, Գյումրի,
Փրկչի վանքը փլվել է, Գյումրի,
Խաչքար ընկան, մոխիր հալածան,—
Քանդողիդ տունը քանդվի, Գյումրի:

Աղունաց տվող, պատվական, Գյումրի,
Մեղքի մեջ կորար, մեղա՝ քեզ, Գյումրի,
Անձեք էր՝ քունեց, անհիծվա՝ ծ ամուս,—
Քանդողիդ տունը քանդվի, Գյումրի:

Դարձել ես Աճի՝ Կոմայրի-Գյումրի,
Գյումրեցոց համար սրբավայր, Գյումրի,
Բո ծիրակ որդին քո ցավը տանի,—
Քանդողիդ տունը քանդվի, Գյումրի:

ԿԱՆՉՈՒՄ Է ԻՆՁ...

Փլատակը կրկին կանչում է ինձ՝
Տառաքանքի համար ու խորհելու,
Թափախվելու դարձրալ տխրությանը ջինջ,
Մարջան-արցունք հավաքելու:

Փլատակը կրկին կանչում է ինձ՝
Կորցրածս գտնեմ ու ետ դառնամ,
Կարոտներս ցողով լցվեմ մի քիչ,
Դավող հույսս լացեմ, հաճախումս:

Փուչ խոսքերից արդեն հոգնել եմ նս,
Տխրությունից բացի չկա ոչինչ,
Փլատակը՝ փլված մայրիկիս պես,
Գիշեր-ցերեկ, անվերջ կանչում է ինձ...

ԿԱ ԱՅՐՊԻՍԻ ՄԱՍՆԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ՝ Ո Ր Ո Ն Ե Լ Ո Ղ Ջ Ե Ր Ի Ն

(Սկզբը՝ «Հիշողության»
№ 8-ում)

Այդ երկուսուկես օրվա ընթացքում սլառեղ չէր դադար՝ ցլւմ աշխատանքը: Թաղված աշակերտների ծնողները և Լեհիմականի քուհերի ուսանողները, գինկորները, կամավորները, որ սկզբում եկել էին Երևանից, իսկ հետո ոչ միայն արևոջ Հայաստանից, այլև Լուսաստանից, Վրաստանից, մյուս հանրապե-

տություններից, առաջին հերթին օգնում էին դպրոցի փրկատակները մաքրելուն: Նրանք անում էին այն, ինչ կարողանում էին: Օճերտ առ շերտ հանում էին թևկորները, ծածկերի ջախջախված սպերը, իջնելով անընդհատ ստորին մասերը: Այստեղ արդեն փորել հանել էին երեք հարյուր երեխա-

(Ծարունակությունը
7-րդ էջում)



Ու թարմ ծաղիկներն են փարվում անմեղ գոհերի հուշաշարին:

ԴԵԿՏԵՄԲԵՐՑԱՆ ԱՐՅԱՎԻՐՔԸ ԼՈՒՍԱՆՎԱՐՆԵՐՈՒՄ



Այստեղ բաղաթի «Մանկական աշխարհն» է եղել... Լուսանկարը՝ Վ. Կոտովի



Այդտեղ գտնում, Երևանում, չիմանալով բուն ու հանգիստ, ուսուսի աշխատում էին խորհրդային ու արտասահմանյան բժիշկները, որոնք հազա բավոր կյանքեր փրկեցին: Լուսանկարը՝ Արմենյանի



Շիրմաթմբեր... Լուսանկարը՝ Վ. Կոտովի

Ա Յ Ի Ը

« Դ.Ա.ՐԱ.ԲԱ.Ղ. »

Կ Ո Մ Ի Տ Ե Ի Ց

Ծնվել է 1964 թ.: Հայրը՝ Ալբերտ Խաչիկի Հակոբյանը, աշխատում է գողող, իսկ մայրը՝ Մարուսյա Հակոբյանը աշխատում է բուժքույր Թովմասյանի անվան № 1 բուժմիավորումում:

Տղանը սովորել և ավարտել է Մալաթիվոյի անվան դպրոցը: Նա արտակարգ սովորող չէր, բայց պատմությունից, հասարակագիտական առարկաներից գերազանց էր, առանց չափազանց մեկու, նա ծնվել էր պատմաբան և քաղաքագետ դառնալու համար: Հայ ժողովրդի պատմությանը վերաբերող գրքերը և հոդվածները կարդում էր ազահարար, անընդհատ ուսումնասիրում էր հանրագիտարանները:

Երբ 1988թ. Ստեփանակերտի և Լեհիմականի միջև բացվեց օդային հաղորդակցության գիծը, առաջին ուղերթով Լեհիմականի «Դարաբաղ» կոմիտեի իր ընկերների հետ թռավ նաև Տղանը: Դրանից հետո երկու անգամ էլ Տղանը թռել է Դարաբաղ, ելույթ ունեցել Ստեփանակերտում տեղի ունեցող միտինգում:

Լեհիմականում, 88-ի միտինգներից մեկի ժամանակ էր... ժողովուրդը սրտատրոփ սպասում էր, որ քաղցյուրոն, երկրի ղեկավարությունը Դարաբաղի հարցի կապակցությամբ արդարացի որոշում կընդունեն: Ի հիասթափություն հայ ժողովրդի, «Պրավդայում» տպագրվեց մեր ժողովրդի դեմ ուղղված մի ստոր գրպարտություն: Եվ, ահա, բազմաժամկետ լեհիմականցիներ վրդովված եկել էին միտինգի: Ներկա էին «Դարաբաղ» կոմիտեի համարյա բոլոր անդամները: Առաջինը խոսեց Տղանը. մտնեցավ ամբիոնին՝ ձեռքում պահած «Պրավդայի» սզո համարը, քարծրացրեց վեր և ասաց. «Ահա» «Պրավ



դան», ընկերներ, սա է «Պրավդան», որի մեջ ոչ մի ճրջ մարտություն չկա, միայն գրպարտություն է: Ապա հրապարակազնորեն պատաստեց այն և գցեց ոտքերի տակ, արժանանալով ժողովրդի հավանությանը:

Այն խառը օրերին Տղանը ժամանակ էր գտնում գրել Արցախի մասին վավերագրական գիրք, փաստացի ապացուցում, որ Արցախը հայերի նախնայաց հայրենիքն է դարեր շարունակ: Հանրագիտարանների մեջ Արցախի մասին, կարելի է ասել, գրեթե ոչինչ չկա, քանի որ դրանք տպագրվել են բրեժնևեյան տարիներին: Սակայն Տղանը մեծ ջանքերով մարտ էր պայքարում գրականություն, որտեղ Արցախի մասին կան փաստաթղթեր, գրական տվյալներ: Գրքի ավարտին քիչ էր մնացել...

Տղանը երազում էր ունենալ 13 երեխա: Մի անգամ տանն ասաց, որ ուզում է ունենալ 13 երեխա: Կինն ասաց՝ հո Ժիրազը չե՛ս: «Ժիրազը իմ հողակիցն է, - պատասխանեց Տղանը, - նա ամեն հարցում ճիշտ է եղել: Իսկական հայր պիտի հետևի Ժիրազի օրինակին»: Դաժան երկրաշարժը խորտակեց Տղանի բոլոր երազանքները: Երկրաշարժից հետո, 89-ի հուլիսին ծնվեց Տղանի աղջիկը: Նրա անունը դրեցին Տղանուհի: Մեծանում է աղջնակը, հավատ ներշնչում, որ հոր նման ուշիմ է լինելու:

ՄԱՅՐԸ ԴԵՌ ՄՊԱՍՈՒՄ Է

ՄՐԱՊ ՄԻՍԱԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Այս սևաչա գեղեցիկ պատանին ծնվել է 1961 թվականին, սովորել Սո. Ծառույանի անվան № 3 դպրոցում, ապա տեղափոխվել և ավարտել Ծուշանիկ Կուրդինյանի անվան № 5 դպրոցը: Ավարտել է № 36 ուսումնարանը՝ ավտովերամորոգող փականագործի որակավորում ստացած: Սովորական կենսագրություն է՝ իր իսկ էությունը համապատասխան. համեմատ, գիշողամիտ, բարի ու ընկերասեր: Աշխատում էր Ազատան գյուղում, սակայն այդ օրը գործի չգնաց ու... Հարևանների վկայությամբ տանն էր մնացել՝ Տեղյանի № 137 շենքի 51 բնակարանում: Այո, հարևանների վկայությամբ, քանզի... փառապանքը մարդուց հետո էլ հարազատները չեն գտել Մրապին ու... մայրը՝ Լենա Խաչատրյանը մինչև օրս փրկում էր ուղում, փնտրում է՝ մի թաքուն հույս սրտում փայփայելով: Երկու տարի է անցել այդ չարաբաստիկ օրվանից, սակայն մայրը դեռ սպասում է որևէ բարի լուրի ու աղերսում մարդկանց՝ որդուց որևէ տեղեկություն ունենալու դեպքում անհազանգել Դուկասյան № 126 հասցեով: Ինչ խոսք, մոր սիրտ է, որ դեռ հավատում է... Երանի չսխալվեք այն:



րում է որդուն, փնտրում է՝ մի թաքուն հույս սրտում փայփայելով: Երկու տարի է անցել այդ չարաբաստիկ օրվանից, սակայն մայրը դեռ սպասում է որևէ բարի լուրի ու աղերսում մարդկանց՝ որդուց որևէ տեղեկություն ունենալու դեպքում անհազանգել Դուկասյան № 126 հասցեով: Ինչ խոսք, մոր սիրտ է, որ դեռ հավատում է... Երանի չսխալվեք այն:

Ե Ղ Բ Ա Յ Բ Ն Ե Ր Ը

ԴՊԱՏՎԱԿԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ ԴՈՒԿԱՍԵԱՆԸ ծնվել է 1934 թ.:

ՋԻՎԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ ԴՈՒԿԱՍԵԱՆԸ 1937 թ.: Եղբայրներն ունեցել են շատ դառը մանկություն և պատանեկություն: Հայրենական մեծ պատերազմի տարիներին մայրը՝ Անարգի Ստեփանյանը երեք որբերի հետ Դուկասյանի շրջանի Սիգափեռ գյուղից տեղափոխվում է Լեհիսկայան, ուր և ապրում են նրանք մինչև արևմտալի երկրաշարժը: Եղբայրներն ընդունվում և ավարտում են Օիրվանգադեի վճիվան դպրոցը:

Դեռևս դպրոցական տարիներին Պատվականը ըստ տեղեկագրորմ էր, գրում էր թե պատմվածքներ և թե երգիծական գործեր: Ուներ լուրատեսակ գրելու, հումորի գգացում: «Բարով ես եկել» պատմվածքների և վիպակների ժողովածուով Դ. Կասյանը 1975 թվականին գրականություն մուտք գործեց: Իսկ մինչ այդ ընթացողին ծանոթ էր բաղաբախին և հանրապետական մամուլում տպագրված բազմաթիվ գործերով: Ապա լույս ընծայեց «Անհամատություն», «Եվ մարդը հորիզոնին չձուլվեց» ժողովածուները՝ հասունամարտի և անհայտ գտնվող ամեն մի գրքով, բերելով իր հետ հորություն ու թարմություն: Ավարտելով բժշկական ուսումնարանը, Պատվականը

աշխատում էր շտապբուժօգնության կայանում: Աշխատանքին զուգընթաց սովորում էր Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մեթոդիկայի բաժնում: Ինստիտուտը ավարտելուց հետո ընտրեց կյանքի ընկերուհի, ընտանիք կազմեց: Ունի երկու լուսաչվի տղաներ:

Այնուհետև սովորեց Մոսկվայի լոգոպեդիայի իստիտուտում: Ուսումնառությունից հետո աշխատանքի անցավ № 4 օժանդակ դպրոցում, որպես բժիշկ-լոգոպեդ: Սկսած 1986 թվականից մինչև աղետի օրը աշխատում էր գրքողների միությունում, որպես պատասխանատու քարտուղար:

Աշխատավարձում էլ մեղմում է փլատակների տակ գրիչը ձեռքին...

Ջիվանը ավարտելով Օիրվանգադեի անվան միջնակարգ դպրոցը, անմիջապես աշխատանքի է անցնում ավտոշտաբային ավտոշարասանում, որպես դիսպետչեր: 1958-ին ամուսնանում է, իսկ մեկ տարի անց ընդունվում ատկորի տեխնիկում: Բարձր գնահատականներով ավարտելով այն, աշխատանքի է անցնում հանրակրթության: Չորս երեխաների հայր էր: Նրանց կրթության և դաստիարակության գործը ինքն էր ստանձնել: Աշխատանքա-



յին 30 տարիների ընթացքում Ջիվանը վաղելում էր ընկերների սերն ու հարգանքը:

Անսամբան քարի էր ու ընտանիքին նվիրված: Անչափ շատ էր սիրում զավակներին ու թոռներին: Հոգատար ու ուշադիր ամուսին էր: Դեկտեմբերի 7-ի առավտյան դուրս ելով տանից լուսկյաց ու տխուր, առանց որևէ բան արտասանելու: Այլևս չվերադարձավ:

ՄԱՅԻՆ ՈՒ ԱՎԱԶԻՎ

ԱՊՐԻՆԵ ՎԱՀԱՆԻ ԱՄՐՈՅԱՆԸ

Ծնվել է 1939 թ., սովորել և ավարտել Ա. Պետրոսյանի անվան № 10 միջն. դպրոցը: Միակ երագանքը բժշկուհի դառնալն էր: Բայց շտապվեց: Ընդունվեց Լեհիսկայանի բժշկական ուսումնարանը, որն ավարտելուց հետո աշխատում էր № 2 մանկական պոլիկլինիկայում: Աշխատում և միաժամանակ սովորում էր մանկավարժական ինստիտուտի Դիգմաֆո ֆակուլտետի երեկոյան բաժնում: 1968 թվականին ավարտելով ինստիտուտը, Ապրինեն աշխատանքի է անցնում № 9 միջնակարգ դպրոցում որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցչուհի: Օտտ էր սիրում երեխաներին և իր հոգու ամբողջ թելերով կապված էր նրանց: Աշակերտներն էլ սիրելի ուսուցչուհուն մեջ տեսնում էին իրենց ամենահարազատ ու վստահելի մարդուն, և դպրոցն ավարտելուց հետո էլ չէր կորսվում նրանց կտրը Ապրինեի:

Ամբողջանի հետև Այսօր չկա Ապրինեն ու աշակերտների սրտում նրա կորստյան վիշտն է նստած: Աշակերտները լուռ կանգնում են նրա շիրիմի մոտ ու երգում՝ հավատարիմ մնալ ուսուցչուհու երբեմնի իմաստուն պատվիրաններին: «Առաջադեմ աշակերտ լինելուց առաջ՝ մայրդ եղեք»: Հիշում են և չեն հավատում, որ իրենց կողքին չի լինելու նուրբ հոգեբանը, ընկերն ու բարեկամը, չի լինելու այլևս նրա խրատատու քարի ծայրը, որը երևում է միայն սառը տապանաքարի վրա դրոշմված լուսանկարից:

Ապրինե Ամրոյանը կյանքից հեռացավ իր սիրելի առջկա՝ № 9 միջն. դպրոցի 8-րդ դասարանի ԱՐՄԻՆԵ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ հետ: Վերջինս էլ երագում էր իրականացնել այն, ինչ էլ իր հաջողվել իր մայրիկին՝ անպայման դառնալ բժշկուհի: Իսկ երբ հարցնում էին նրան, թե ինչու՞ անպայման այդ մասնագիտությունն է ընտրել, պատասխանում էր անգիր արած դասի նման՝ «Իր մայրիկիս երագանքը կատարվի, որ բուժեմ մարդկանց... որ



ինն նման ոչ մեկը առանց հայր չնեմանա»: Ո՛վ է այսօր իրականացնելու ձեր երագանքը:

ՌԻՄԱ, ՀՐԱՆՏԻ ՀԱՐՈՅԱՆ
1935 թվականին Կուրմայրիում էր ծնվել երկու երեխաների մայր և հինգ թոռան տատ Ռիմա Հարոյանը: Ինքնամուտաց անկողնում էր ընտանիքին, զավակներին: Հիանալի տնտեսուհի էր, խոհանոցի գիտակ, մարդասեր ու հարևանասեր: Հարագատ էր դարձել նաև ձեռնարկությունը՝ գույպեղենի

արտադրական միավորում անխուճ գույպագործուհի Ռիմային, պարզեղ նրան պատիվ ու աշխատանքի բերկրանք: Այստեղ էլ կնքեց իր մահկանացուն՝ 35 տարի անընդմեջ աշխատելուց հետո, խոր վիշտ պատճառելով ամուսնուն, զավակներին, հարագատներին, աշխատանքային ընկերներին:



26-Ի ԵՐԿՐԱՑՈՒԹԻ ՄԱՍԻՆ

— Անցնում ենք Տավան-Ղշաղ գյուղի (Օիրվանգադե) մոտով, ոչ մի կանգուն չենք, եկեղեցին անգամ կործանված է: Գյուղի կենտրոնում երևում է չորս գերան, նրանց վրա՝ նախկին տան առաստաղը, պատերը չկան: Այս է գյուղի միակ «տունը», պատմում է ակամատեղը:

Քյալայի (Նորաբեր) գյուղում ենք, բոլոր տները հիմնահատակ կործանված են, խոտի դեզերն ասում են, որ իրենց մոտ փլատակների փոխարեն դեռ 30 ժամ առաջ գյուղական խրճիթ է եղել: Բնակիչները հավաքվել են մոտակա բլրի վրա. այժմ միայն այստեղից է ծուխ բարձրանում:

Արփաչայի (Ախուրյանի) մյուս ափին երևում է Բաշ-Օորագյալ տանկավազ խոշոր գյուղը. նա ևս ավերակների մի կույտ է դարձել: Ամուր, քարաշեն եկեղեցուց միայն պատերն են մնացել: Թվում է, թե գյուղում կենդանի շունչ չկա: Բանդվել է նաև բլրի վրա գտնվող Բաշ-Օորագյալ բերդը:

Ընչող տպավորություն է թողնում Բալանդուր կիսակայարանի շենքը: Տարերային ցնցումից գետինն են շարժվել շենքի վերին մասերը, կիսով է մի ամբողջ քարակույտ... Բալանդուր գյուղում հագիվ կարելի է նշմարել երեք-չորս պատերի մնացորդ, տեղ-տեղ երևում են հողամիջից դուրս ցցված գերաններ: Հնույն արածում են կենդանի մնացած կովերն ու ոչխարները: Տպավորություն ակելի ծանր է Դահալի (Գեղոց) գյուղում: Այս գյուղն անհնամարտ զոհն է տվել: Մի գիշերում նրա բնակիչներից պակասել է մոտ 200 շունչ: Արդեն փլատակներից հանված և թաղված են 150-ից ավելի դիակ: Մյուսները դեռ հերթի են սպասում: Ոչ մի կանգուն խրճիթ, ոչ մի պատ անգամ չի երևում գյուղում: Ավերակների մեջ երևում են մարդկանց մի քանի խմբեր: Առավոտ վաղ նրանք կրակ են արել:

— Մի ձերուհի նստած էր իր փլատակների վրա, — շարունակում է ակամատեղը, — մի քանդված պատի մոտ, և անշարժ ու ուռած աչքերով նայում էր դատարկության մեջ. նրա գլխավերևում կախված էր մի մեծ քար, որ բաժնի թեթև հարմից անգամ կարող էր ընկնել և ցրել ձերուհուն զանգը: Մեր նախագոյուցացումը ոչ մի ազդեցություն չունեցավ. նա ստամ հաջաքը շարժաքրեց մեզ վրա, հետո անխոս կախեց գլուխը և ընկավ մոտրումների մեջ:

Արտաճակի տեսարաններ, մեկը մյուսից ողբերգական, մեկը մյուսից ցնցող:
— Տեսնե՞ք ամբողջովին փոյ են եկել. կարասների մեծ մասը մնացել է փլատակների տակ: Ավերակներ, ավերակներ և միայն ավերակներ. դա քաղաքի հարավ-արևելյան մասն է, որտեղ բրնձաբուծություն են հաստատել նրանք կաղթականները, նրանք սպիտակ տղաներ են շինել և ապաստան գտել:
Պատերից մեկի մոտ դառնազին բառաչում է մի կով, որի ոտքերը վշրված էին: Այստեղից էր, որ հանեցին մի երեխայի, որը ծուլվել էր ու ճնկվել:
— Մի ութսուն տարեկան պատավ մի շիշ օղի է դատարկել և նստած իր քանդված տան մի քարի վրա հայտնում է, սպասում էր հիսնամյա փեսին, որը, նստել էր նրա հակառակ կողմը՝ իր տան փլատակների մեջ:
Լեհիսկայանի կայարանում ենք: Կայարանի շենքն անվնաս է, դահլիճում տեղ-տեղ

ակովել է միայն գաջը: Օտտ պում ենք քաղաք: Առաջին տպավորությունն այն է, որ քաղաքը շատ բն է վնասվել... Բայց անցնում է մի երկու րոպե ևս, մենք կանգնած ենք բողբոլից այլ պատկերի ստաջ:

Այլևս ոչ մի անվնաս շենք չի երևում, բոլոր տների պատերը քանդված են, ավերակներ՝ ինչքան ուզես...
Ինչքան առաջ ենք գնում, ավերակ ավելի մեծ չափեր է ընդունում: Արդեն պատուհան են հիմքերը քանդված տներ: Նոր կառուցվող կինոյի շենքը անվնաս չի մնացել, փողոց են թափվել նրա ելքերի զարդաքարերը:

Կառավարական հատուկ հանձնաժողովը մարդկանց հետ է, նրանց կողքին: Դա ուրախացնում է, թե տալիս: Կանաց-կանաց լուծվում է հայրի, վրանների, գետնափոր բարաքների հարցը: Եվ ահա հրապարակվում է նաև զավգործկու մտաջին հրամանը՝ արգելվում է երկրաշարժի մասին մտաջածին լուրեր տարածել: Նման մարդիկ անխնա կպատժվեն՝ վարչական և դատական կարգով: Թույլ է տրվում բաց երկրի տակ վաճառք կազմակերպել, սակայն արգելվում է մթերքները սովորական արժեքից բարձր վաճառելը: Բանակից զինվորները մեկ ամսով արձակուրդ են գալիս: Այլևս ծընողները մեռնել չեն: Դպրոցները երկու ամսով փակվում են, երեխաներին արձակուրդ է տրվում, իսկ երկու ամսից հետո դպրոցները պետք է գործեն քարաքներում:

Լեհիսկայանը ու նրա գավառը, այդ, շատ ծանր հարված կրեցին, շայն մարդիկ դիմացան, չհուսահատվեցին: Ամրակողմից նրանց կամքը, հավատը, նրանք համոզվեցին, որ իրենք մեռնել չեն, որ խորհրդային ժողովուրդը իրենց հետ է: Եվ ահա, չանցած որոշ ժամանակ, հայրենի օջախներն են վերադառնում արևայակները: Կյանքը մրտնում է սովորական հունի մեջ:

ԱՎԱՆԱՏԵՍՆԵՐԸ ՊԱՏՄՈՒՄ ԵՆ

«ՈՏՔԻ ԶԳՈՒՅՇ ԴԻՐ
Հ Ո Ղ Ի Ն »

ՍԻՐԵԼԻ ՍԻՐԱՆՈՒՅՇԻՆ

Սև է փողոցը, սև են ամպերը,
Սև են շողերը արևի...

Ու սև փողոցում
Ոտից-գլուխ սև է այս կինը.

Փոխում է բաղերը դանդաղ,
Փոխում է վարանոտ ու զգույշ.
Ասես չի ուզում հպել հողին,
Հողի՞ն...

Հողի տակ իր այրն է ջահել՝
Սիրուն է տրոփում հողի տակ,
Որդիներն են գույգ՝
Աչքերը սաթի պես սև, անուշ

Մոր սիրուց, կարոտից
խենթացած
Ու տան մեծերը՝ թոռներին գրկած...
Քաղում է կինը... երկրում անում:

Սև քողն է ոտքի տակ՝
Նորահարս իր քրոջ...
Ո՛ր, ո՛ր դեհ ոտքը՝
Թեկուզ և... զգույշ:

Ու կանգնում է շփոթ,
կարկամած
Կինը...
Կի՞նը երկրաշարժն է՝ ինքը,
Սև փողոցում սևեր հագած...



ԳԻՆՈՍՅԱՆ ԱՍՏԳՐԿ ԳՈՒՐԳԵՆԻ
(1955 թ.)

Այդ օրը ուրախության ու բերկրանքի
օր էր Աստղիկի համար: Եվ նա ծպիտը
դեմքին իր դատեր՝ Անիի ծննդյան տորթն
էր զարդարում, իսկ փոքրիկ Անին, և-
րևի մոր փեշից կախված, ուրախ ճլվլում
էր և հիացմունքով հետևում մոր շար-
ժումներին:

ԳԻՆՈՍՅԱՆ ՀԱՅՎՈՐԾ ՀԱՅԿԻ (1950 թ.)

Դուան ամեն մի զանգին վեր էր թռո-
չում տեղից Հայկուշը: Արդեն քանի օր
էր, մինչև դուանը հասնելը՝ կարոտի ար-
ցունքները խեղդում էին կոկորդը, որդին
Դավիթը, քանակից պիտի գար... Ու ըս-
պատում էր Հայկուշը: Դուան զա՞նգը...
չէ, որդին չէ... չէ, երկրաշարժն է...
մահը...

Անհծվես դու, երկրաշարժ, քանի-քա-
նի ծպիտ ու կարոտ ձգմեցին քո սև, ա-
հարկու թևերի տակ:

ԼՈՒՍԻՆԾ ԳԻՆՈՍՅԱՆ

ՎԱՍԱՆ ՍԵՎԱՆ

Հ Ի Թ Ա Տ Ա Կ Ի Պ Ս Ա Կ

ՏԱՆՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Չիացար ոչ մի քանով
Եվ չունեցար ոչինչ,
Այն շատ քիչը, որ բեզ տվին,
Միշտ էլ մնաց շատ քիչ:

Միծաղեցիր լացի մնան,
Լացո՛ր՝ ծիծաղ էր միշտ,
Քեզ կողք-կողքի ուղեկցեցին
Ուրախություն ու վիշտ:

Ուրախության պահերո՞ կարճ,
Վիշտո՞ մշտամնա...
Ի՞նչ ես անում չաղ երկնքում,
Ասա դու ինձ, Տանյա:

Լալի՞ս ես, թե՞ ուրախանում
Այնպես իրարամերձ,
Թե՞ դրախտում դիցուհու պես
Քուն ես մտել հավերձ:

ՌՈՒԳԻԿ ԿՎՐՏՉՑԱՆԻՆ

Ասում էիր՝ սիրո հանգույժ ուրախ երգեր գրիր,
Տխրությունը շատ է կյանքում, ուրախ երգեր գրիր,
Քո ցավերով մի խոսվիր զվարթ հոգիներին,
Խի՞նք շատ է մեր բաղաբուն, ուրախ երգեր գրիր...
Թե ուզեմ՝ չեմ էլ կարող թացը զատել չորից,
Փլատակված մեր բառաբուն ցավը խորն է նորից:

ԱՐԱՐԱՏ ԿՎՐՏՈՒՄՅԱՆԻՆ

Բանաստեղծի օրը՝ ցավ ու ցավալից:
Բանաստեղծի օրը տագնապ է գոծում—
Ինչ-որ մեկը տիեզերքի սահմանից
Բանաստեղծի անհուններն է ներս խուժում:

Բացք դռներն՝ ամենափակ երկնքի
Բանաստեղծս այնպես դժվար է շնչում
—«Գծիկ չկա մահվան միջև ու կյանքի»—
Սա եկողն է, սա եկողն է շնչում:

Գծիկ չկա մահվան միջև ու կյանքի—
Նույն կծիկի երկու ծայրերն են նրանք,
Իրարամերձ երկու նրես տախտակի,
Մեկինը՝ «Կյանք», մյուսինը՝ «Մահ» գրած:

Գծիկ չկա մահվան միջև ու կյանքի,
Մի դարձրեք ձեր թիթեռի օրը՝ թույն,
Դուք ինքներդ ձեզ մատնել եք տանջանքի,
Ե՛րբ կտանեք Քրիստոսի հարություն:

1990 թ. սեպտեմբեր

ԱՐՁԱԳԱՆՔԵՔ ՄԵՆ ՆԱԽԱՉԵՆՈՒԹՅԱՆԸ

ՈՐՔԱՆ Է ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՂԵՐԻ
ՔԱՆԱԿԸ ԿՈՒՄԱՅՐԻՈՒՄ

Մտակույան շրջանի մտավորականների խորհուրդը և
«Կուսակցի» թերթի խմբագրությունը դիմում են քաղաքի սպ
զարհակչությանը՝ օգնել ճշտելու երկրաշարժի զոհերի քանակ
կը: Դրա համար անհրաժեշտ է, որ երկրաշարժի ժամանակ
ՓՎՎԱԾ ԾԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԻԶՆԵՐԸ ստորև ներկայացված ձև
վով տեղեկություններ հայտնեն շենքում զոհվածների քանակ
ի մասին:

ԿՈՒՄԱՅՐԻՈՒՄ ԶՈՂԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՀԱԾՎԱՌՄԱՆ
ԹԵՐԹԻԿ

Թաղ _____ փողոցը _____
նրբանցքը _____ շենքը _____ շենքի մուտ-
քերի թիվը _____ հարկերի թիվը _____ փլված
բնակարանների թիվը _____ շենքը փլվել է ամ-
բողջապես, թե՞ մասնակի _____ զոհերի թիվը
ա) հատուտ _____ բ) մտավորապես _____
Ծենքի բնակիչ՝ _____

Ձևը լրացնելուց հետո՝ անհրաժեշտ է այն փոստով ու-
ղարկել հետևյալ հասցեով. Կուսակցի, Լենինգրադյան 5, երկ
րաֆիզիկայի ինստիտուտ, Ս. Նազարեթյանին, հեռախոս՝
4-17-23:

Ելնելով հարցի կարևորությունից, խնդրում ենք մեր հա
մաքաղաքացիներին, անպայմանորեն արձագանքել մեր հա
խաձեռնությանը (մինչև հունվարի 30-ը), քանի որ բացի
փլված շենքերի քանակներից ոչ ոք ճշգրիտ չգիտե բնակա
րաններում զոհվածների քանակը: Հավաքված տվյալները
ամփոփելուց հետո կուսագրվեն «Կուսակցի» թերթում:

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ
«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՍԻՆՅԱՆՆԵՐ



Երիտասարդ այս ընտանի-
քը երկրաշարժի պահին զրո-
նջվում էր տանը: Տարին մո-
տենում էր սվարտին: Ընտա-
նիքը սպասման մեջ էր: Սու-
խանա վահիլյանը սպա-
սում էր հերթական երեխա-
յին: Առաջնեկը ծնվել էր 1987
թվականի դեկտեմբերի 20-ին
և վահիլյան ամուսինները
ուրախությամբ կատակում
էին, թե երկրորդը ևս որոշել
է լույս աշխարհ գալ եղբոր
ծննդյան օրը:



Երիտասարդ էին Մյասնի-
կյն ու Սուսաննան: Ընտանի-
քի հայրը ծնվել էր 1959 թը-
վականի հունիսի 1-ին, կինը՝
1981 թվականի դեկտեմբերի
24-ին: Դեկտեմբերը նրանց
համար տոնական ամիս էր:
Երկու ծնունդ դեկտեմբերին,
երկրորդն էլ սպասվում էր,
իսկ հետո նոր տարին էր,
այսինքն նորից ծննդյան տո-
ներ: Ծննդյան ամիս, որ ա-
վաղ, պիտի դառնար ընդհա-
նուրթի հանգչելու ամիս:

Մյասնիկը ավարտել էր
շինտեխնիկումը, որպես օպե-
րատոր աշխատում էր տնա-
շինական կոմբինատում և
հուսադրում էր Սուսաննային,
որ մինչև նոր տարին ընտա-
նիքը թվապես կավելանա, որ
վերջապես նրանք «Լենին»
տրեստի հանրակացարանից
կտեղափոխվեն բնակարան:
Այդ օրը աստվոտյան Դու-
կասյանի շրջանի Գոգուհու-

ԼՈՒՍԻՆԾ ԳԻՆՈՍՅԱՆ

Զ Ո Ր Ի Թ Ա Ղ Ի Ց

Մեր թաղը Գրուրի ձորի պոմպեյ,
Անուր կարկասած հին-նոր տներով,
Սակայն խիճող մեր զվարթ պահերին
Մի տուն էր ազնիվ, ջանգլույտներով...

Ողջունելի է «Հիշողություն» հավելվածի հրատարակությունը: Որպես լավ միջոց գոհվածների հիշատակը հավերժացնելու և գոհն դրանով սիրելի վշտից կրկնված մեր սերունդը:

Մեր թաղից գոհվել են մայրեր՝ կիսամուրազ ու երիտասարդ, ինչպես և երեխաները: Նրանք հարգված և սիրելի կանայք էին:

ԼՈՒԻԶԱ ՆԱԶԱՐԵԹԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ծնվել է 1942 թ.: Աշխատում էր կոշիկի ֆաբրիկայում 1965 թվականից մինչև 1988 թվականի դեկտեմբերի 7-ը՝ աղետալի երկրաշարժի օրը: Համեստ աշխատող էր: Ծնողական պարտք էր համարում երկու տղաներին ամուսնացնելը: Ամեն ինչ մնաց թերի: Դիակը գտնվեց կոշիկի ֆաբրիկայի փլատակների տակից:



ՖԻԲՐՈՒՀԻ ԱՂԱՍՈՒ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ծնվել է 1945 թ.: Կոշիկի ֆաբրիկայում էր աշխատում 1982 թվականից և արժանացավ նույն ճակատագրին: Ֆիբրոսիզ երեք երեխայի մայր էր, համեստությամբ ու աշխատասիրությամբ վաղելում էր աշխատանքային կոլեկտիվի և հարևանների ջերմ սերն ու համակրանքը:



ՍԵՂԱ ՎԱՐԴԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ծնվել է 1934 թ.: Աշխատում էր Չկալովի անվան կարի արտադրական միավորումում, ուր և կնքել է մահկանացուն: Մայրական անխոնջ պարտքը կատարել է իսկական հաջկնոջ նվիրաբերումով: Սիրված ու հարգված էր գործընկերների և բոլոր ճանաչողների շքր ջանում:



ՏԻՐՈՒՀԻ ԱՂԱՍՈՒ ՄԱՐԳԱՐՅԱՆ

1968 թվականին է ծնվել: Սովորել և ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: Այնուհետև ՆՑ 41 պրոֆտեխտուսումնարանում ձեռք բերելով դերձակի մասնագիտություն, աշխատում էր կարի ֆաբրիկայում: Նոր էր ամուսնացել: Այդ օրերին ծննդաբերության համար նրան տեղափոխում են ծննդատուն, ուր և գոհվում է, դեռ աշխարհ չեկան մահկան հետ:



ԹԱՄԱՐԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել էր 1946 թվականին: Չորս երեխայի մայր էր և միաժամանակ հայրական պարտքն էլ էր վերցրել իր ուներին, ուստի և աշխատում էր պատվով կատարել ծնողական պարտականությունները: Աշխատում էր գույպեղենի արտադրական միավորման կոտլոն արտադրամասում: Չոքվեց աշխատանքում, թողնելով երեխաներին Աստծո հույսին:



ՀՈՎՍԵՓ ԵՎ ԵԼԵՆԱ ՀԱԿՈՅՏԱՆՆԵՐ

Հայրս համեստ ու օրինակելի անձնավորություն էր, միշտ բարի ժպիտը դեմքին: Բարի էր բոլորի հանդեպ, վաղելում էր ինչպես մեծերի, այնպես էլ փոքրերի համակրանքը: Ուրախությունն ու տխրությունը սրտանց կիսում էր բոլորի հետ:

Ուրախությամբ էր լցվել, երբ ստացել էր տան բանալիները, չկարծելով, որ այն դառնալու էր իրենց գերեզմանը: Եվ Հովսեփ Հակոբյանը կրանքի 53-րդ տարում անմեղ գոհ դարձավ իր տան մեջ՝ Կամոյի 26 շենքի 6-րդ հարկում:

Մայրս՝ Ելենա Հակոբյանը ընդամենը 49 տարեկան էր, երբ վրա հասավ անսպասելի աղետը:

Սիրտս մղկտում է, երբ հիշում եմ մորս խոսքերը, որ շենք տեղափոխվելու առաջին օրվանից ասում էր. «Մենք



կյանք չունենք այս շենքում: Կարծես հոգիս վկայում էր...

Սիրելի ծնողներս, որ չէիմ պատկերացնում կյանքը առանց մեկմեկու, իրենց տան մեջ, գրկած երկու թոռնիկներին՝ ԵԼԵՆԱԶԻԿԻՆ ու ԿԱՐԵՆԻՆ, անմեղ գոհեր դարձան: Ծառ էին սիրում իրար և մինչև վերջ էլ իրարից չբաժանվեցին:

Ընդամենը երկու գարուն էր ապրել Ելենան, որին աչքի լուսի պես էին պահում: Եվ ինչքան հույսեր էին կապել նրա հետ...

7 տարեկան Կարենը այդ օրը նկել է տատիկի և պապիկի մոտ, որոնց հետ էլ կնքեց իր մահկանացուն:

ՌԻՄԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԻՄԻԿ ՊԱՐՈՒՑՐԻ ՆԱԶԱՐՅԱՆ

Մինչև վերջին պահը նա հավատարիմ մնաց իր հարգալից դարձած ծննդատանը և աշիկները նոր բացած փոքրիկներին:

Մանկական բուժքույր էր Սիմիկը: 19 տարի անընդմեջ աշխատում էր սիրած մասնագիտությամբ:

Երեք զավակների մայր

էր, սիրված ու հարգված կին: Նա հիվանդին բուժում էր ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես:

Կյանքի 38-րդ տարում Սիմիկ նազարյանը իր մահկանացուն կնքեց ծննդատան փլատակների տակ:

ՌԻՄԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՍԻՐԵԼԻ ՍԵՂԱ ՋԱԲԱՐՅԱՆ

Կյանք, որ աման էր ձգված լարի, անմնացորդ նվիրումի, անվերադարձ կորուստների, թրթռացող բաց նյարդերի, Այդ կյանքը սիրելի տիկին Սեղայի համար դեռ դաժան մի ճակատագիր էր պահել իր գրասպանոցում:

Երբ մահացավ նրա որդեկորույս ութամյա անց մայրը, հուղարկավորության օրը տիկին Սեղան ինձ սասց. «Աղջիկս, ուզում եմ, որ երբ մեռնեմ, ինձ թողնեք մեծ շուքով»: Այդ խոսքերից ես մի տեսակ վատ զգացի, սակայն չէի կարող գուշակել, որ թաղումը լինելու էր «երանելի»...

Այն սև օրը նա թոռնիկների հետ միասին տանն էր: Լուսերես Լիանան (աչից) ու Հասուկիկը (տատի սիրելի թոռնիկները) դարձան տատի հավերժ ուղեկիցները: Այրվեց շենքը...



Դժոխքը բացեց արձախում երախը, իր մեջ առնելով ներքանց: Կրակի բոցերի հետ նրանց սուրբ հոգիները անմեղ անցորդ համբառնեցին վերև՝ ձուլվելու հավերժին:

Ամեն գիշեր աստղաշատ երկնքում առանձնացնում եմ

երեք աստղեր, այդ նրանք են: Նրանք ամեն օր հսկում են իրենց սիրելի Անյայի և Նելլիի անդորրը այս խողպահույզ և անհավասար երկրի վրա:

ԱՐՈՒՍԻԿ

ՀՈՒՑԵՐ ԶՈՂՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կ Ի Ր Ո Վ Ի Փ Ո Ղ Ո Ց ՈՒ Մ

Երկրաշարժից առաջ էր: Մի քանի տարի առաջ: Առաջին ձյունն էր իջել քաղաքի վրա: Գալիս էր խոշոր փաթիլներով, երկնքի անսահման բարությունն ու մաքրությունը բերելով մարդկանց: Ծառերի չոր ճյուղերը ծածկվել էին ձյունով ու ձմեռային թուփ շերտերով փողոցները անսովոր կերպով մարդաշատ էր դարձրել:

Գորկու փողոցից դեպի Կիրովի ճեմատանոցն ի վար բացվում էր մի ուրախ տեսարան:

Մեծ ու փոքր առանց էին, քրքշուք, ձնագնդիներով խիտ ծանրանձանքի: Մի այնպիսի ուրախ փրարանցում էր, ինչպիսին կարող էլ լինել միայն առաջին ձյան ծանանակ:

Փոքրիկ տղաների ծրացան խումբը ոչ մեկին բաց չէր թողնում առանց ձնագնդային հյուրասիրության: Նրանք այնքան արագ էին շարժվում, որ հնարավոր չէր խուսափել: Հանկարծ ձնագնդիները սառնեցին երեխա-

ների ձեռքերում՝ պարզված օդի մեջ: Ու մի քանիսը, քաղաքավարությամբ դիմելով մեզ, սասցին.

— Մորաքույր, դուք բոլորը անցեք, մենք ձեզ չենք խփի:

Հենց նույն պահին մեր առջև կանգնեց 45-րդ դասարանի մի փոքրիկ տղա, ձնագնդից հետևում պահած.

— Բարի երեկ, մորաքույր, անցեք, մի վախեցեք, ես սսել եմ, ոչ մեկը ձեզ չի խփի:

— Վայ, Տոբիկ ջան, այդ դու ե՞ս:

(Ծարումակությունը՝ 8-րդ էջում)

Հ Ի Ե Ո Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ը Ն Ը Ն Ի ա յ ր ի ա ն ու մ



ԹԱՄԱՐԱ ԳԵՎՈՐԳԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Ծնվել է 1953 թվականին, Լեհիստանում:


Լուսնկարից ծայրում ես մեղմիկ քո ծանոթ ու հարազատ, սիրտ շոյող ծախտով: Մի ժամանակ դա այնքան ուրախություն ու հրճվանք էր պատճառում հարազատների, բարեկամների ու ընկերների, իսկ այսօր...քո ծանոթ ծախտը արցունք է քամում նրանց աչքերից, սիրտ մաշում անողոր ու կանգնում է նրանց աչքերի առաջ՝ մի տանջալի հիշողություն: Գիտե՞ս, ընկերներդ են գրել քո մասին՝ Ջենման, Սիման, Ռոզան, Սահականույզն ու Ամալյան: Գրել են ցավով ու խոր կակիծով ու բնութագրել այսպես՝ Թամարան մարդ էր՝ մարդկային ամենաբարձր հատկանիշներով: Չհասցրիր ընտրած մասնագիտությանը՝ մանկավարժությանը զբաղվել: Ավարտեցիր մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը ու աշխատում էիր Չխալովի անվան կարի ֆարիկայում՝ սպասելով քո՝ մանկավարժի իսկական աշխատանքին: Չարիկայում էլ կներցիր քո մանկանոցում: Չհասցրիր նաև ընտանիք կազմել, քո տաք օջախն ունենալ: Ինչքան քան չհասցրիր...



Երբեմն թվում է, թե քեզ ստիպում են հավատալ անհավատալիին:

Սակայն շտաով ըստափվում ես, քանզի կորցստյան վիշտը երակների միջով, արյանը հետ է հոսում ու իր անցած ողջ ճանապարհին քեզ հիշեցնում, որ կորցրել ես, կորցրել անվերադարձ:

Այո, տիրամոր այս հայացքն էլ է սառել, անընչացել ու պիտի հավատանք. այսօր մեզ հետ չէ ՄԵՐԻ ԱՐԹՈՒՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ, մարդ ու անաղարտ, համեստ ու ահուց կենսագրությամբ աղչիկը: 19 տարի էր սպրել ու հասցրել հիմնավորապես կրթով Կիրովի անվան դպրոցում, ապա Կարա-Մորզայի անվան երաժշտական ուսումնարանի դաշնամուրային բաժնում, ամբաստանյալ համերգներ տալ: Գծնչակ 1988-ին էլ ընդունվել էր Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի ուսանողի կարգի: Ինչպես քեզ հիշեցնում էր քո անունը՝ ինչպես քո անունը ինչպես քո անունը: Եթե ամեն մի սկիզբ իր տրամաբանական շարունակությունն ունենար...



ՍԱՄՎԵԼ ՍՐԱԳԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

1992-ին կրանար նրա 60 տարին, եթե ողջ մնար: Նրա ամբողջ գիտակցական կյանքը կապված էր գույպերի արտադրական միավորման հետ: 23 տարեկանից սկսած անընդմեջ աշխատել է այս կոլեկտիվում, մասնակից եղել նրա գործերին, արարման երթին, տեսականու նորացմանը, երիտասարդ հերթափոխին մասնագիտական հետազոտությունների ներարկմանն ու դաստիարակությանը, թողել բարի անուն, խոր հետք:

Այլազ վարպետ Ս. Մխիթարյանը նորարարական քաղաքաշինական առաջարկությունների, ինչպես ու արդյունավետ միջոցների հեղինակ էր, որոնք հեշտ ու դյուրին էին դարձնում, թեթևացնում քանակորի աշխատանքը, բարձրացնում թողարկվող արտադրանքի որակը: Կատարական քաղաքաշինական կարգանքի էր արժանացել աշխատանքի մարդը:

Կյանքն ու գործը երբեք չէր բաժանում միմյանցից: Ապրում էր թույլին հասնելու, որին օգնելու, անցուկ դատալու ձգտումով: Եվ կյանքն էլ տվեց առաջին հերթին մյուսներին՝ փրկելու պահին: Այսպես էր ծնվել, ուրիշ կերպ էր կարող լինել:



ԱՆԱՆԻՏ ԷԲԱԿՅԱՆ

Թվում էր աշխարհում ինձանից երջանիկ մարդ չկար: Երջանիկ էի, աչքիս առաջ ապրում էր զավակս, ապրում էր ուրախ, գոհ: Հիշում եմ ուրախությունից ճառագող դեմքը, երբ առաջնեկն էր ծնվել, ինչպես էր խնամում, փափալում նրան, մայր էր դարձել... Ընդամենը մեկ ամիս մայրիկ մնաց:

Կյանքով լեցուն, կյանքը սիրող այս գեղեցիկ աղջիկը հիմա մեզ հետ չէ: Դեռ 21 տարին էլ չէր լրացել, երբ հեռացավ:

Աշխատում էր Գր. Ջոհրապետի անվան գրադարանում: Գոհ էր իր գործից, սիրով էր աշխատում, և ընդհանրապես, ամեն ինչ անում էր հաճույքով, ի սրտե:

Հիմա Կոշտոյան փողոցի երբեմնի մարդաշատ, շենոլ ինձհարկանի չկա: Այդտեղ էր սպրում Անահիտը, որ իր սիրասուն բալիկի հետ մնաց փրատակների տակ: Չգտան նրանց: Կույր, անխնա բոցը լստիկ էր ամեն ինչ: Կրակի հետ էլ վատվեցին՝ վատվեցին ու հավերժ հանգա՞ն նա մեր հույսերը: Չկա Անահիտը, չկա Արմենիկը, չկա նույնիսկ մի «հարազատ» շիրմաքում, որի վրա ի սրտե ողբան, իրենց վիշտը դյուզն-ինչ թեթևացնեն ողջ մնացածները:



ՈՍԿԱՆ ԹԵԼԱՄԱՆԻ ԴԱՐՈՒՅԱՆ

Տոն էր նրանց տանը: Ուրախությունը կարծում էր ծնողների հայացքից. խորհրդային բանակից պատվով վերադարձել էր որդին՝ Ոսկանը (ծնվել է 1968 թվականին): Այն ժամանակ Դարբինյանները իրենց ամենաերջանիկներն էին համարում: Հիմա...երբեմնի տարով, խաղաղ տունը դարձել է մի տեսակ տառ, վանող, պակասել են ծախուն ու ծիծաղը, որ առաջ անպակաս էին: Չկա տան պուրը՝ Ոսկանը, որ գոհվեց պոլիտեխնիկական ինստիտուտում: Ինչքան կյանք կար նրա մեջ, ամենամ չէր մնում ոչնչից: Օտտ էր մտահոգված արցալիցան հարցով. ինչ է լինելու վերջը: Ցույցերին, միտինգներին միշտ ներկա էր, միշտ խոսք ուներ սաելու: Ոսկանը Սևակ էր շատ կարդում, անգիր անում, սիրում էր կրկնել՝ Ապրել, ապրել այնպես ապրել, որ սուրբ հողը երբեք չզգաս քո ավերորդ ծանրությունը:

Նա կարճ ապրեց, բայց ապրեց աղպես...



ՆՈՒՆԵ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ինչքան հավատ կա այս աղջկա անմեղ հայացքում, ինչքան հույս ու սպասում... համեստ էր, բայց մի՞թե աղետը առաքինություններ է չղցրեց...

Ծնվել էր 1969 թ. մարտի 31-ին, Լեհիստանում, բանվորի ընտանիքում: Մուրթել է Օրջոնիկիձեի անվան (№ 14) դպրոցում: Ավարտելուց հետո ընդունվել է Լեհիստանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկայի ֆակուլտետ: Արդեն երկրորդ կուրսում էր, ուսման զեբնագանցիկ: Տարբ օրից նը գերադրության հունդեմ էր լինելու: Երբ երեքաց գետնը, ինստիտուտում էր:



ԼԵՆԱ ՀԱՅՎԱԶՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ


Ծնվել է 1949 թ. հոկտեմբերի 26-ին: Սովորել է հաշվապահական ուսումնարանում: Հաշվետար էր աշխատում կոմպրետրների գործարանում: Երեք երեխաների մայր էր: Ամբողջ կյանքը անմասնորդ անվիթել էր իր ընտանիքին: Ամեն կերպ ձգտում էր, որ իր տունը լինի հարմարավետ, ճաշակով զարդարված: Ուներ ուրախ, ջերմ, անմիջա կազ բնավորություն:

Ցանկանում էր տղային իր իսկ ձեռքով բանակ ճանապարհել, բայց դաժան ճակատագիրը կտրեց նրա կյանքի թելը աշխատանքի պահին:



ԳՈՀԱՐ ԱՐԳԱՐԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ծնվել էր 1940-ին, Լեհիստանում: Օտտ հիշողություններ կան նրա հետ կապված, և երբ հարազատները տրվում են վերհուշերին, մեկ լուսավորվում է նրանց սիրուն ու հոգին, մեկ էլ կորստի անավոր ցավից մոռացվում: Սիրում էր իր ընտանիքը՝ Գոհարը, ամբողջ հոգով անվրված էր իր երկու երեխաներին: Սիրում էր կյանքը, ղեկարություններից հետ չէր կանգնում, չէր վախենում, հույսով ու հավատով էր նայում կյանքին: Միայն խավարից էր սարսափում, էլ ինչ իմանար, որ դեռ 50 տարին չբոլորած հավերժական խավարի աշխարհն է գնում: Ն՞ 79 դիտտ խանություն վաճառող էր: Աղետի օրը աշխատանքում էր:



ԽՈՐԵՆ ՇԱՎԱՐՈՒ ՄԻԶԱՅԵԼՅԱՆ

Ծնվել է 1967 թվականի սեպտեմբերի 22-ին, Լեհիստանում: Սովորել ու սովորել էր Ղ. Ղուկասյանի անվան № 16 դպրոցը: Մեկ տարի անց ընդունվել էր ԵՐԳԻ-ի քաղաքային մասնագյուղի տեքստիլ արդյունաբերության բաժինը: Դեռևս չվազելած ուսանողական կյանքի հմայքները, հոկտեմբեր ամսին (1985 թ.) գորակոչվել էր բանակ: Վերադարձավ 1987 թվականի հոկտեմբերին, շարունակելով ուսումը ինստիտուտում: Աղետը գետնեց նրան ինստիտուտի փվող կամարների տակ: Անվարտ մնացին բարձրագույն կրթությունն ու ինստիտուտը...



ԼԵՎՈՆ ՀԱՅԿԻ ՄԵԼԻՔՅԱՆ

Ծնվել է 1978 թ., Լեհիստանում: Սովորում էր Գ. Սունդուկյանի անվան (№ 20) միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանում: Հարվածային էր, ծիր, աշխույժ, գրադվում էր սպորտով: Առանձնակի դերապանական ընդունակություններ ուներ: Դեկտեմբերի 7-ի առվտյան արթնացավ շատ տըխտր ու մտքամուր: Ես նրան զգուշացրեցի, որ ուշանում է դասից: Նա դանդաղ հագնեցվեց, նույնիսկ այնքան տխուր էր, որ պալտուսակը մոռացավ և դուրս եկավ: Ես նկատեցի նրա մոլորությունը և շատ կասկածանքով, անհանգստացած, պալտուսակը հասցրի նրա հետևից: Այլևս չվերադարձավ...

ՊԵՊԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՒ ԱՐՔՈՒՐԻ

Ծնվել է 1879 թվականի մարտի 17-ին, սովորում էր № 16 դպրոցի երրորդ դասարանում և № 5 երաժշտական դպրոցի ջութակի բաժնում, Պարսպուտ էր սպորտով:

Հաճախ ինքս էլ եմ զարմանում, թե առանց քեզ, իմ անուշիկ թոռնիկ, իմ լավ Արտյունիկ, ինչպես եմ ապրում, ինչպես դիմանում: Աչքերս ամենուրեք քեզ եմ որոնում, շուրթերս դողալով բռնում են շնչում, իսկ ամեն անգամ, երբ պատահականորեն կողքից լսում եմ այդ անունը, սկսում եմ դուրս ողջ մարմնով, սիրտս անհանգիստ սկսում է բարբախել՝ վախով, անուշիկ տագնապով, մինչև... Կամաց-կամաց վերականգնվում է դաժան հիշողությունը, դառն իրականությունը. չկաս դի

այլևս, չեմ կարող լսել քո քաղցր ձայնը, այն վերջին խոսքերը, որ արտասանեցիր դեկտեմբերի 6-ին՝ պարտադրելով այդ օրը անպայման ա՛րցելով քեզ: Խոստացա/բայց չկարողացա կատարել խոստումս, մերի՛ր, իմ լավ թոռնիկ: Հեռանալիս համձնեցի քեզ վերջին նվերս՝ հուկեյի խաղափայտ, որը ուրախ-ուրախ վերցնելով, հետագայի կրկնելով՝ «Պապիկ, երեկոյան անպայման տատիկի հետ կգաք»: Դա ոչ միայն խնդրանք էր, այլ մի տե սակ պահանջ, հրաման: Հըրածե՛լս էիր ուզում տալ այդ երեկո բոլորիս... Այսօր քո խաղալիքների վրա եմ փնտրում մտումահետքերդ, շրտում եմ դանդաղ, մտնեց՛նում շուրթերիս ու... Անշունչ առարկաների վրա քո պարզ



Ու խելացի աչքերն եմ տեսնում, միամիտ հայացքը, իսկ մտքերդ, մերի՛ր, կարող չեմ կարող, ինչքան էլ տանջ վեմ: Սիրտդ բարբախում էր, երբ փլատակներից հանեցին քեզ հայրդ ու քեռիդ, իսկ աչքերդ լուռ խոսում էին...

Ժ. ՎԱՐՍԵՏՅԱՆ

ԿԱ ԱՅԴՊԻՍԻ ՄԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Ն Ե Լ Ո Ղ Զ Ե Ր Ի Ն

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ների ու ուսուցիչների, գրեթե ոչ մեկը ողջ չէր: Փրկողներից ինչ-որ մեկը ասում է, թե ողջ էր միայն մի տղա, մյուսը հակաճառում է, հինգն են, ասում է, երեք երեխաներ և երկու չափահասներ, սակայն բոլորն էլ գիտակցությունը կորցրած:

Սև կաշվե բաճկոններով, մոնոսթաշին գոտիներով, ըսպիտակ սաղավարտները գլուխներին փոշեպաշտպանիչ սպա կիներով ֆրանսիական փրկարարներին դիմավորեցին որ պես վերջին հույսի, գուցե նրանց ավելի շատ բան հաջողվի:

աավորեցին մախկին դպրոցի ողջ հարթակը: Լինգեր ու բախեր առած, շերտ առ շերտ քանդեցին, որպեսզի նորից դնեն ձայնորսիչը և որոնեն, որոնեն:

Առաջին գտնվածը տխուր փաստ էր՝ աղջիկն արդեն չէր շնչում: Այն ժամանակ արդեն բոլորը միասին՝ ֆրանսիացիներն ու հայերը շարք կանգ նեցին ձեռք ձեռքի փոխանցելով տուֆի ծանր բոլակները: Միասին նրանք կոունկով բարձրացրին ծանր սակերը: Նրանք արդեն սովորել էին իրար հասկանալ առանց թարգմանիչների էլ և շատ լավ էին հասկանում միմյանց:

Ֆրանսիական փրկիչների երկրորդ խումբը այդ ընթացքում աշխատում էր ինչ հարկանի երկար տան փլատակների վրա: Այստեղ էլ էին առջե վից գնում շնչող, հետո ձայն որսիչները: Այստեղ էլ առաջին հայտնաբերվածը ունախություն չպարզանց: Ֆրանսիացիները շարունակում էին որոնումը: Ծթե նույնիպես տեղ՝ Լեհիսկանում, նրանք միայն մի ողջ էլ գտնեց, ապա նրանց ջանքերը իզուր չեն լինի: Սակայն Պլեթ Լեթրուան ավելի մեծ հույս ուներ: Զե որ ընդամենը...

Ծթե նրանք շուտ եկան լինին... եթե մենք ինքներս ունենայինք փրկարար հատուկ շոկատներ այդպես հանդարձված և այդպես վարձեցված: Միայն այստեղ, Հայաստանում մենք հասկացանք, թե մեր օրերում ինչքան թանկ է գնահատվում պրոֆեսիոնալիզմը մարդկային կյանքի համար:

Մենք ստույգ չգիտենք, թե քանի մարդ են փրկել Հայաստանում ֆրանսիացի փրկարարները: Տարբեր թվեր են բերվում. և վաթսուհ մարդ, և քառասուն: Հայտնի չէ, թե այդ փրկվածներից հետո քանիսը ողջ մնացին: Իհարկե, ցանկություն կար մեծ, «տույախո թիչ թվեր» թերել: Սակայն արդյո՞ք մի կյանքն էլ թիչ է:

Այդ նույն Լեհիսկանում արդեն ոչ ֆրանսիացի, այլ ավստրիացի փրկարարները երկրաշարժից 135 ժամ անց Գերցեմի փողոցի բնակելի տան փլատակների վրա Լին աշխատում: Ոչ որ արդեն չէր ենթադրում, որ դրանց տակ վաղուց լուսաններից գոնե մեկը ողջ մնացած կլինի: Սակայն նրանց խելացի շունը իր տերերին տարավ մի խոշոր թերի մտա, և ավստրիացիները գրեթե մի ամբողջ օր գիշեր-ցերեկ անցք էին բացում և գտան, փրկեցին Ամաֆիտ անունով մի կնոջ: Դա արտի թելադրանքով եկած ավստրիացի տղաների փրկված վեցերորդ կյանքն էր: Խոնարհ վրում ենք նրանց առջև կարել ցանքի, արիության համար: Բայց և արժանի տանք այն մարդկանց՝ նրանց պրոֆեսիոնալիզմի համար:

Սակայն մեզինց չի՞ պահանջվում նման պրոֆեսիոնալիզմ:

Առջևից գնում էր շունը: Գերմանական ցեղի գամփ սև շունը խելացի դնով պտըտվում էր այն տեղում, ուր տակավին նոր պեղումներ էին կատարում, հետո արագ վազեց ծածկի սպերի ճեղքի մոտ, վերադարձավ, մի փոքր հետացավ, շրջան կատարեց... Եվ հանկարծ պատկեց: Արդյո՞ք...

— Գուցե, — հաստատեց սպան: — Սակայն հարկավոր է այս մասում ունկնդրել:

Սալին է հարվածում մի լինգ: Հրաման է արձակում, որը ֆրանսերենից թարգմանվում է ռուսերեն, իսկ ռուսերենից հայերեն:

«Իմ ազդանշանով դադարեցնել ամեն մի աշխատանք, չչարժվել, չխոսել»:

Այն նույն տեղում, ուր տակավին նոր պատկեց էր շունը, դրվում է ունկնդրման հատուկ մի սարք: Ֆրանսիացի զինվորը հանելով դիմակը, դնում է սկանջակալները:

— Առանսին:

Լինգի մի քանի հարված, և բոլորը քարանում են: Այս պիսի հնչյունին պետք է արձագանքի նույնիսկ գիտակցությունը կորցրած մարդը՝ շարժում կատարի, ավելի ուժեղ ու ավելի արագ շնչի: Եթե տարածությունը շատ մեծ չէ, սարքը կարող է լուսել նույնիսկ արտի արագ զարկերը:

Գլուխը բացասաբար օրորում է ֆրանսիացին: Այստեղ ողջեր չկան:

— Այն, — դառնորթամբ մեզ է դիմում կամավորներից մեկը, Ալվան Դուկաչանը, — եթե այդ ֆրանսիացիներն այդ սարքերով առաջին օրը լինեին այստեղ: Այսօր ոչ որ չի գիտեր ճշգրիտ որտեղ փնտրել, կորորեն էին փորում: Իսկ ինչ որ տեղ կողքի թերևս երեխաներ էին մտնում...

Հետո պարզ դարձավ, որ այնտեղ, որ նշել է շունը, սալերի տակ թաղված էր մի ամբողջ ռուսարան անգլերենի ուսուցչուհու հետ միասին: Սակայն նրանք արդեն օգնություն կտոնք չէին գտնում: Իսկ ֆրանսիացիները շարունակում էին որոնում: Հարմարեցնելով՝ շարժանակ էեկտրակայանը, նրանք լու-



Անուշիկը անհուն կարոտ թողեց ծնողների և բարեկամների արտերում ու անմահացավ իր համադասարանցիներից շատերի հետ միասին:

ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱՌՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Գրիչը ձեռքին այս գեղեցիկ երեխան Բ. Հարիբջանյանի անվան դպրոցի 5-րդ դասարանում էր սովորում: Սիրում էր նկարել, գրել ու կարդալ: Այդ պես էլ գնաց... Այդ օրը մայրը նրան դպրոց չճանապարհեց, ու Անդրանիկը գնաց քրրոջ հետ: Նկարչության դաս էր նրանց մոտ, իսկ դասից առաջ Անդրանիկը ինչ-որ լավ չէր գգում իրեն: Մոտենում է քրրոջը, գանգատվում գլխացա

վից, իսկ վերջինս խորհուրդ է տալիս դպրոցի բուֆետ օբյեկտ, ապա՝ շտապել դասի: Դաս, որ վերջինը եղավ Անդրանիկի ու նրա նման քանի-քանի անմեղ երեխաների համար: Երանի տուն ուղարկած լինեի՝ մորմորում է այսօր քույրը, չէ՞ որ լավ չէր գգում իրեն: Անդրանիկին գտան նույն գրիչը ձեռքին՝ սեղմած մատների արանքում, ասես հրածնաշտի խոսք էր գրելու վերջին պահին:

ՆԱԻՐԱՆ ԱՐՍԵՆԻ ԳՈՄԵՏՅԱՆ

Ծնվել է 1977 թվականին, Լեհիսկանում: Դարձյալ մեկ անմեղ զոհ: Դարձյալ № 9 միջնակարգ դպրոցից: Նաիրան է՝ 5-րդ դասարանցի այս գեղեցիկ աղջիկը: Հաճախում էր պարի պարսպամուկներին ու ուշադրությամբ հետևում այն ամենին, ինչ կապված էր պարսպամուկի հետ: Երազում

էր պարունի դառնալ: «Երբ մեծանամ...» ու բարի, խոսուն ժպիտը փայլում էր դեմքին, քանզի խոսքերի շարունակությունը գիտեին բոլորը՝ թե ծնողները, թե ընկերներն ու հարազատները: Ավա՛ղ, չնեծացավ Նաիրան, մնաց նույն տարիքում, դպրոցական համազգեստով, նույն մանկական գեղեցիկ ծապավենով ու վզկապով:

ԱՆՈՒԾԻԿ ՀՐԱՆՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ծնվել է 1978 թ. Լեհիսկան կանում:

Թախծուտ աչքերով այս գեղեցիկադեմ աղջնակը ընդամենը տասը գարուն էր ապրել: Սովորում էր № 30 միջնակարգ դպրոցում և անչափ սիրում էր առաջին ուսուցչուհուն՝ Գայանե Մկրտչյանին: Չարաբաստիկ 1988 թվական: Այդ տարի տեղափոխվեց № 16 միջն. դպրոցը, եղբոր հետ միասին, նույն դասարանում:

Ահեղ երկրաշարժը նրանց բաժանեց իրարից ընդմիջում:

Ասում են ճակատագիրը ծրնվում է մարդուց առաջ: Անոդոք ճակատագիր... Միշտ խոսեմ ու թախծուտ էր Անուշիկը, արդյոք գալիք ճակատագիրն էր գոռակում նա: Այդ օրը երագ էր տեսնել՝ մահացած պապին: Ծատ էր ուզում պատմել, չհասցրեց, ուշանում էր դասից ու վազելով գնաց: Գնաց այլևս չվերադառնալու համար: Այդ պես էլ չիմացան հարազատները, թե ի՞նչ երագ էր տեսնել նա, ու ողջ տուն չվերադարձավ:

ՕԳՆՈՒԹՅԱՆ Է ՇՏԱՊԵԼ «ԿՐԱԲԱՆ»

Արտաքուտ խեցգետնի էլ նման է «Կրաբ» անունը կրող այդ «խելացի ու գործունի» սարքավորումը, որ այս օրերին կարելի է տեսնել լեհիսկանյան փլատակների մարքման վրա աշխատելիս: Լեհիսկանյան ցեղերի առաջարկած այս մեքենաշինական նորույթը օծուված է հիդրավիկ «ձեռքով» մանիպուլյատորով, որը խիտ

շարժունակ է, ունի մանրելու լայն հնարավորություններ: Մեքենան յուրատեսակ հաջող քննություն է անցել Զեռնրիի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման ու վերականգնման աշխատանքներում և հիմա էլ եկել է երկրի համար առաջնային նոր հասցեով:

Լեհիսկանյան «Էլեկտրոմաշ» գիտաարտադրական միավորումը սեղմ ժամկետում պատ-

րաստել և աղետի վայր է ուղարկել Զեռնրիում իրեն հիսնալի դրժորած «Կրաբ» նոր տեսակի մեքենան: Մի այլ ձեռնարկությունում՝ գիտաարտադրական միավորման շինարարական մեքենաների գործարանում պատրաստվել են կես խորանարդ մետր տարողությամբ շերտով 30 էքզակավատորներ, որոնց կարիքը զգացվում է տարերային աղետի վայրերում:

ՏԵՔՍՏԻԼ ԱԳՈՐԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ



Մանկուց որք էին մնացել տեքստիլագործներ Արամալիս և Արփիկ Գրիգորյանները, մեծացել և ընտանիք էին կազմել: Նրանց զավակները ևս ընտրեցին տեքստիլագործի մասնագիտությունը:

Ֆինգը: Ընտանիքը կիսիկց և մնացին Ֆինգ անչափահասներ:

ԱՐՄԵՆ ԱՐԱՄԱՅԻՄԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ծնվել է 1946 թ.: Աշխատում էր տրոլեյբուսային հավաքակալանում, շահագործման բաժնի պետ էր: Ուներ երեք աղջիկ, երազում էր ունենալ արու զավակ, ունեցավ, բայց 2 տարին հազիվ լրացած, մնաց որք, երկու անչափահաս քույրերի հետ: Արսենի կինը ազգությամբ ռուս էր՝ համեստ,



քարի ու խելացի անձնավորություն, որ Հայաստանն համարում էր իր երկրորդ հայրենիքը, Կոմալյին՝ սրտա մտ, հոգեհարազատ քաղաք: Ռայան գործվածքային ֆաբրիկայում էր աշխատում: Երկրաշարժի օրը նրա հերթն ազատ էր, Արսեն որդուն տարավ մանկապարտեզ, տուն եկավ, որ ամուսնուհի հիվանդանոց ուղեկցի, ԼԻԱՆԱՅԻՆ ուղարկի դպրոց: Բայց չհասցրեց: Ծածկառալի տակից համեցին երեքին՝ իրար փաթաթված:

Կ Ի Ր Ո Վ Ի Փ Ո Ղ Ո Ց Ո Ւ Ս

(Սկիզբը՝ 5-րդ էջում) Տոբիկը ամոթխած ծըլտաց:

—Էս էլ երևի քո հնազանդ թիմն է:—Տղաները ուրախ ծիծաղեցին: Նկատելով մեզ, Կիրոսի դպրոցի 5-րդ դասարանի աշակերտ Խաչատուր Աղեկյանը սաստիկ էր իրենց բակի տղաներին, ճանապարհ հարթելով ծանոթ մտրաքոչ ու նրան ուղեկցող աղջիկների ստաց:

Նորը ու պացիկ էր Տոբիկը, այդպես սիրում էր նրան կոչել նրա գեղանի մայրը՝ Լյուսին: Զնայած մանուկ հասակին, տղան ազդեցիկ էր,

էլեզանտ, կոկ հագնված, զարգացած, շքեղացած, քաղաքավարության բոլոր կանոններին տիրապետող: Ասում են, որ նա անհամապատասխան էր գեղեցկացել էր այդ տարին, երբ ընդունվել էր ինստիտուտ: Զոհվեց առանց ճաշակելու քննաշրջանի համբ: Մնաց իմ հիշողության մեջ Խաչատուր Աղեկյանը մամուկ, կենդանի, կարմրած այտերով, գեղեցիկ, ինչպես ձմեռային այն երևկոն, Կիրոսի փողոցի վրա, երբ քաղաքում տեղում էր առաջին ձյունը:

Լ. ՄԱՅԱՍԱՆՅԱՆ



ԺԱՄԱԿՈՉՑԱՆ ԳՈՂԱՐԻԿ ՄԻՇԱՅԻ

Կյանքով լեցուն, բարի ու հարգված ԳոՂարիկ (Եսեն ևս չէր ԳոՂան էն ասում) երբ էր քույրիկ 28 տարին, նվաճա 88-ի երկրաշարժը... Երկու ազգանունի 3 տարեկան ԳՈՂԱՐԻԿ և 6 տարեկան ԳՈՂԱՅԻՆ ճեմ մնացին փրատակների տակ այն պահ, որ տեղափոխվել էին 10 օր առաջ: Ո՞ր 5 երաժշտական դպրոցում աշխատում էր որպես դաշնակահարուհի Մարդամուտ, բարի ու քրնքուռ էակ էր Փրատակների



տակից երբ լսեցի օգնություն ազդարող ձայնը, կարծես ողջ աշխարհն ինձ տվին: Նույն օրը հանեցինք ջարդված ու վիրավոր և տեղափոխեցինք Երասան նրան ողջ տեսնելն աշխարհ էր ինձ ուրախացրել, որ մտացել էի երկու փոքրիկներին մասին, ո՞ր րոնց այլևս չտեսա: Մեծ հուշերով տեղափոխեցինք Մուկվա: 17 օր անընդմեջ խնամում էի նրան իմ ձեռքերով, որ ուժ ու կյանք պարզեցի նրան, միաժամանակ օգնում էի մյուս վիրավորներին, որ գոնե փրկության լույս հաս



ներ, սակայն... 17 օրվա փայփայած հույսս մի վայրկյանում կորավ, ներքան աղես ողջ շահա: Հիմա ամեն օր ահանջներես մեջ են նրա նվազի մեղեդիները: Գալիթն շատ էր կապված ինձ հետ, իմ միակ ուրախությունն էին փոքրիկ բալիկներս: ԳոՂարիկը 8 ամսական էր: Մայրը անուշ օրոր սանկուց հետո դուրս դանդաղ փակել ու դուրս էր եկել, որ հանգիստ թնի: Զգիտեր, որ վերջին օրերն էր ասում անուշ բալիկին:

ԿԻՄԱ ԺԱՄԱԿՈՉՑԱՆ





ԳՈՂԱՐԻԿ ԱՐՑՑՈՍԻ ՄԻԿՈՅԱՆ

Ամեն գարնանամուտի, մարտի 13-ին, իր ծննդյան օրը, հավերժի հետ հրեշտակային թևերով, սպիտակ աղավառ տեսքով ԳոՂարիկը տուն է գալիս: Նրա փրկվելը ծանր պատահարները, ստապելապես՝

խնկարկած քույրը և դրանով արթնցնում վշտահար մորը՝ Լեմային: Ամեն գիշեր, կրատեմին ցողաթաթախ համբուլորի պես այցի կգա սրտարեկ Արտյոմ հայրիկին, սակու, որ ինքը կգա դրախտային մաքուր ոգի դարձած: Գալիս է, որ սպեղանի դնի հայրիկի վշտահար սրտին, որն անեղ երկրաշարժից ու սիրագործ գուտեր մահվան բոթն առնելիս գետնին տապալվեց սրտի ուժեղ ծակոցից ու տեղափոխվեց Երևան՝ երկարատև բուժման: Հոգեբաններն ասում են, բնության ու տիեզերքի աստվածային չարված օրերն է, որ մարդիկ օրեր, ամիսներ ստաց ներքից զգացողությամբ կանխագուշակում են իրենց փրկվելից: Ծանր պատահարները, ստապելապես՝

մահը: Դա արագուցված է մեծ ձիրքով ու տաղանդով օժտված վաղամտիկ գիտնականների ու արվեստագետների կյանքի օրհնակով: Այդպես սպրեց ԵրՊԻ-ի Կոմալյիի մասնաճյուղի ավտոմատացման արքերի ու կառավարչի համակարգի 2-րդ կուրսի ուսանողուհի ԳՈՂԱՐԻԿ ԱՐՑՑՈՍԻ ՄԻԿՈՅԱՆԸ: —Դպրոցում սովորելիս երազում էր իրավաբան դառնալ, — վկայակոչում է ԳոՂարիկի սիրված մանկավարժը՝ Եգոր Գոմցյանը: —Նա արդարացի ցատկ մով էր լցվում շուրջը տիրուսոցիալական կյանքի անողոր անարդարությունների ու շահագործությունների հանդեպ: Տառապանքի անանց պահեր էր ապրում սուժայիթյան անագործյն կոտորածներից:



Լուսանկարչի աչքից չէր կարող վրիպել Սպիտակում տարերքին չի դիմացել նորակառույց հինգհարկանին անգամ, միևնույն Լեմինակիանում կանգուն է դար ապրած այս տունը:

Խնձ... Լուսանկարները՝ Վ. ԿՈՏՈՎԻ